**Քննարկվեցին Ապարանի տարածաշրջանի համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի կազմման հարցեր**

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի՝ նոյեմբերի 18-ին Արագածոտնի մարզ կատարած այցելության ժամանակ բարձրացված հարցերի եւ տրված հանձնարարականների քննարկման նպատակով մարզպետ Գաբրիել Գյոզալյանը, Թալինի եւ Արագածի տարածաշրջաններից հետո, հերթական խորհրդակցությունը անցկացրեց Ապարանի քաղաքապետարանում:

Տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ հստակեցվեցին զարգացման ծրագրերի հետ կապված մանրամասները, նոր մոտեցումներն ու ժամանակացույցը: Մարզպետը նշեց, որ զարգացման ծրագրերն իրենց մեջ ներառելու է այն կարեւորագույն խնդիրներն ու անելիքները, որոնք իրատեսական են եւ նպաստավոր կարող են լինել համայնքներում հեռահար նպատակների իրականացման առումով:

Համայնքների ղեկավարներն իրենց դիտարկումներն արեցին, որոնք առաջարկությունների տեսքով կներկայացվեն կառավարություն: Դրանք, մասնավորապես վերաբերում են մսամթերքի, բրդի, կաշվի արտադրությունների ստեղծմանը, համայնքային նշանակության այլ խնդիրների լուծմանը:

Խորհրդակցության ավարտից հետո մարզպետի մոտ կայացավ քաղաքացիների ընդունելություն՝ տարածաշրջանի բնակիչների համար: Ի թիվս այլ հարցերի, ստացվեց դրամական աջակցության 19 դիմում, որոնք բավարարվեցին:

Տարածաշրջան կատարած այցի շրջանակում Գաբրիել Գյոզալյանը եղավ նաեւ Ապարան քաղաքում կառուցվելիք բազմաբնակարան շենքի շինհրապարակում, ծանոթացավ շինարարական աշխատանքների մեկնարկային ընթացքին: